## ԿՐՕՆԱԿԱՆ

Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցի՝ անցեալ ամսոյ 27 նին փառաւոր և միանգամայն՝ տխուր հանդիսով ս. Վարդանանց՝ Ազգային քաջ նահատակաց յիշատակը տօնեց։

Նոյն առթիւ ս. Թադէոս սեղանատան մէջ ՚ի պատիւ և ՚ի մեծարանս յիշատակին սրբոց Վարդանանց՝ ուղերձներ կարդացուեցան ս. Միաբանութեան կողմանէ, Նաև մի ուղերձ Նորին Վեհափառութեան Ս. Կաթողիկոսի մատուցուեցաւ. զոր արժան կը համարիմք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց։

ՅԱՌԹԻՒ

# Մեծահանդէս տօնի նահատակութեան

## ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Զարթի՛ր, քնա՛րդ աստուածալար, աշխոյժ սրտիս վառ ՚ի վառ,
Մեծ յիշատակ Ախոյանից Ազգիս հնչել քաղցրաբար.
Եւ դու Հոգիդ Հայաստանեայց սլացի՛ր ՚ի թև արծաթի
՚Ի Շաւարշան կարգել կազմել հանդէս Տօնից սուրբ գնդին,

՚Ի դա՛շտս ՚ի դա՛շտ Աւարայրեան, ուր խումբք յաղթող Դիւցազանց,
Ելէ՛ք որդիք առաքինեաց սրի յաղթող Հայկազանց.
Եկէ՛ք դիտել զինուորաց հանդէս զուարթնոյ երկնից լուսածին
Եւ զվեհութիւն Հայաստանեայց Աստուածընկալ Տաճարին,

Գունդք այրընտիր նահատակաց Հայոց ՚ի դաշտ ծաղկածին,
Հեղան զերդ գետ յորդախաղաց ակնունելով գոռ մարտին,
Նստան յայնկոյս Տղմուտ գետոյն և խումբք Պարսից սպառազէն.
Բանակք կռուին, և քաջութիւնք անձնուէր յերկուս խիզախեն,

Հայոց քաջաց Առաջափողք գոչեն ազդու ընդ այգուն,
Եւ գօտեպինդք քաջ նահատակք յարեան ՚ի մարտ Ճակատուն.
Պարսից անդէն հնչեն եղջերք ահագնագոչ զեարբառ
Զարեաց գնդին վառել զսիրտ գալ ՚ի կրկէս քաջաբար։

Հրոսակք թափով մօտին միմեանց մարտ բոլորեաց ահագին,
Քաջք դիմամարտք ՚ի սուր անկան՝ տապալեցաւ այժ պսակին.
Եւ նետաձիգ հեռն ՚ի կապարճ արին Վարդան ամրակուռ
Յահ պաշարէր Պարսիցն զխումբ զերդ բոցավառ սաստիկ հուր,

Վազէր 'ի վեր, և շանթընկէց զաջ թև գնդին արտալած
Քանդեաց տապալ, արկ 'ի կործան, ցանեալ ցրուեաց 'ի միմեանց.
Միջնակարգին դարձաւ ապա բանակ ստուար զինազարդ,
Զվիթխարի փղացն ջոկք տապաստ էարկ թանձրաբարդ,

Երբ կատարեաց զվերջին հարուածն՝ յաջոյն դառնայր 'ի յահեակ.
Ընդ կորովոյն արիութիւնք կրկին կանգնին շահատակ.
Արիւնարբու մրկապատեան սուսերին թափ 'ի յաջոյն
Զերդ գերանդի հնձէր Պարսից ընտիր զօրուն թիւ ողջոյն։

Քա. և նոյն փութայր 'ի գործն քաջն Ներշապուհ Արծրունին,
Կամսարականն և Արշաւիր, Արտակ իշխան Մոկացին,
Եւ առաջին գնդին Հայոց քաջագօտի նահատակք
Ըստ բազէից յօդալաց Պարսիցն յորդեն 'ի դասակ։

Մաղխազունին գոռայր Խորէն, Քաջբերունին և Ներսէհ
Վերհամբառնալ յերկնից կամար բարդ Հայկազանց և նսեհ,
Վանանդացին ճեպէր Թաթուլ և Գնթունին այն Տաճատ
Յալիս գետոյն խառնել յորդել անդուլ արեանց զկայլակ։

Դրօշք հողմածալք բանին երբեմն և պատառին նետահար,
Երբեմն ապա փաթոյթ ընդ փայտ զփրտ լքանեն վտահար.
Ընդ խատերախ նժոյգ 'ի դող յետախուսեն սրավազ
Եւ սանձարձակ սրանան ընդ դաշտ և ընդ խրամս ինքնավազք։

Երկաթատ կուռ վահանաց շաչիւնք շաչեն յերկնից ծոց
Նիւալաւուրտ զխաւարն դիտէր Տարտարոսին զանշէջ բոց.
Զի յաղեղանց թռուցիկ սլաքաց անձրև տեղայր հրածին,
Հուր ընթանայր Պարսիցն 'ի գրոհ ծախել ցշունչն վերջին։

Աչք մթագնին յարեան ուղգս՝ սիրտք դողահար զանգիտեն.
Տրոմահաղորդք զբաժակ մահուն արբին պարսիկք անօրէն.
Աղմուկն յուզեաց, շառք դիտապաստ թաւալեցան 'ի մարտին,
Ո՛հ անկելոց, հա՜յ, հոյն և լաց զերկինս 'ի գութ շարժեցին։

Ընկաւ անդէն Վարդան 'ի զոհ տուեալ զանձն իւր պատարագ,
Ազգին 'ի սէր և Հայրենեաց սուրբ կրօնիցն օժանդակ.
Վարդակարմիր արեան կաթիլն մաքրեաց զաշխարհն Հայաստան
Յորմզդական վառարանաց հրոյն 'ի փոշեաց պղծութեան։

Ընկաւ Յաղթօղն, և քաջազունք կրկին ճակատ յարդարեն,
Եւ ձիարշաւ Պարսիցն 'ի գունդ արխաբար խիզախեն.
Շրջան առնուն զհրոսակօք՝ ամպոց փայլմանց զերդ շանթիք
'Ի ջուր արեան սրբեալ զկրօն վճռեն նոքա զդատակնիք։

Ահա վարդամատն երբ առաւօտ խաղայր փութայր 'ի գիշեր,
Սարսափ ահեղ զգագաթամբք լերանց բարձու շուրջ պատէր·
Ոստի նետից և սուսերաց և նիզակաց ծարաւի
Դադար կարդան երկիւղագին կողմանք երկու գու մարտի։

Նուաճարար գուպարք ամպոց զերկին կալան Սետուղեան
Զայն աւետեաց հնչեաց ապա և անմահից զօրութեան·
Սարսափ ահի արկ զՊարսկօք կարդաց յանձնեն զՎարդան
Նա զվկայն՝ որք 'ի մարտին լուսատեսակ ընկեցան։

"Ի տխուր մեծ հանդիսին, յորում եղէք շահատակ
Վկայք, որեան Հօրն լուսոյ, 'ի յօթեանս վերնաբնակ·
Ե՛կ, քաջ Վարդան, ե՛կ համայեակ ընդ ձեզ արին Դիմաքսեան,
Ցնծա Տաճատ, բերկրեաց Արսէն, զի փառք պսակ ձեզ միան։

"Խորէն, Արտակ, ձեզ ցօղ ցօղէն Երկնից Երկինք կապուտակ,
Հանգիր Վահան, ընդ Գարեգնի, որ նախկինն է նահատակ·
Փանզէ Տղմուտ բազմաբերան ձեր յիշատակ կայ մարտին,
Նաև Արտաշ արիւնաներկ ձեօք շատ կեցցէ խնդագին"։

Դրնդիւնք ձայնից շարժեն զերկիր, զդաշտ, զձոր, զառապար,
Հուր, բոց, տեղայր ուրացելոց 'ի սիրտ 'ի կամս խղճահար։
Ի վերարշաւ անիւք կառաց անդ փոյթ ընդ փոյթ Աստուածեան
Յանմահից կարգ բարձին զհայսն 'ի միձանակ քաջութեան,

Ոք յաջորդէք Հայք Արամեան Տեարց և Հովուաց քաջարթուն,
Ոյք քրթնաթոր ջանիւք զանբիծ Ձեզ հաստուցին զօծութիւն,
Օղէկ հաւատոյ պինդ կալարուք ընդդէմ ալեաց երկնադէզ
Մեր թշնամեաց խարդաւանաց փշրել թակարթս զպէսպէս։

Նորակրօնից՝ որք փարատեալ զարդիս յերկանց Գրիգորեան,
Օծել ջանան զանբիծ զհօտն գնեալ արեամբ Քրիստոսին,
Ու ձեզ հայլն աչք բիւր Ազգիս սրբել զնոցին արտասուք,
Նուիրական է ձեր պաշտօն զոր կնքեցիք սուրբ ուխտիւք,

Օրհնեալ դուք Հայք, որք սուրբ արեամբ զյաղթանակ պսակաց
Փառօք ստացայք, յաւերժ պարծանք մեր և վկայք գերաղանց·
Օրհնեալ և որք հայրենասէրք ցշունչ յետին ուխտեցին,
Վ կայ Աստուած, զայս ձեզ երկինք պարտք անհրաժեշտ վճռեցին։

Սարկ. Աւետիք Մասր. Փինանեանց